

540

828

ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻճԱՆԻ

Պ. ՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 3

Ե Ե Պ Է

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ —

— ՀԱՆԱՊԱԾՆԵ

Պ Ե Թ

Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԳՈՐԾՎԱԿԱՆ

卷之三

ԿԱՅԵՄ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻճԱՆԻ

№ 3 ՔԱՂԴՊՐՈՑԻ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 3

այս գրությունը պատճենաբառ է մատուցված կամ պահպանված է Հ. Յանձնական գործադիր կողմէ

Ն Ե Պ Ը

ՍՈՑԻԱԼԻԿԱՄ =====

===== ՀԱՆԱՊԱՐՀՆ Ե



A I 8584

Հ. Խ. Ա. Հ. ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1926

Գրառեպվար № 844թ. № 449. Տիրաժ 4000
Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—№ 301

ՆԵՊԸ—ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՃԱՆԱՊԱՐՀՆ Ե

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՆԵՊԸ ԿԸ ՎԵՐԱԿԵՐՏԻ Նախորդ զույցից մենք զի-
թերկրի տեսք տնտեսական զանա-
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ զան ձևերի մասին։ ՄԵՆՔ
ընդունեցինք, վոր մեր տնտեսության մեջ ամե-
նաառաջավոր տարրը սոցիալիստականն է և այդ
ողութամբ ել պետք է վերակերտվի մեր վողջ
տնտեսությունը։ ՄԵՆՔ պարզեցինք նույնպես,
վոր այդ վերակերտումը տեղի լե ունենում տրն-
տեսական զանազան տարրերի միջև տարվող պայ-
քարի միջոցով։

Կուսակցության տնտեսական քաղաքակա-
նությունը — «Նոր տնտեսական քաղաքականու-
թյունը», — նպատակ ունի այդ պատքարի մեջ ա-
պահովելու տնտեսության սոցիալիստական տրոի
հաղթանակը։ Այդ հաղթանակին, պարզ ե, չի
կարելի հանել միանգամից։ Նրան չի կարելի
հասնել և դեկրետ հրատարակելու միջոցով։ Չի

կարելի հրամայել և վերացնել տնտեսական բոլոր տարրերը—թողնելով իայն սոցիալիստականը։ Յերկրի ամբողջ տնտեսությունը վերակերտելու համար անհրաժեշտ է տեսական ու համառ պայքար մղել։ Հիմնականն այն է, վոր պետք է վերակերտվեն 20 միլիոնից ավելի մանր ու մանրագույն գյուղացիական տնտեսությունները, պետք է, վոր նրանք միանան խոշոր գյուղատրնտեսական արտադրության մեջ, և տնտեսությունը վարեն ընդհանուր, կոլեկտիվ աշխատանքով։

Վորպեսզի մեզ համար ավելի պարզ լինի, թե ինչ ե նշանակում վերակերտել գյուղացիական մանր տնտեսությունը, բերենք կուսակցության 14-րդ կոնֆերանսում (1925 թ. ապրիլ) տրակտորի մասին ընկեր Ռիկովի ասած խոսքերը.—

«Տրակտորն անհամեմատ ավելի մեծ չափով կարող ե հեղափոխել գյուղատնտեսական արտադրական պրոցեսը, քան հազար ազիտատոր, վոր գյուղ են յեկել հողագործության հավաքական ձևերի առավելության վերացական քարոզով։ Կոռպերատորներից մեկն ինձ պատմում եր գաղափարական այն ազդեցության մասին, վոր ունեցել ե տրակտորի մուծումը գյուղում։ Ահա հարցերի այն շարանը, վոր ծավալվում ե տրակտոր գնած արտելի առաջ։ Առաջինը, հարց ե

ծագում, արդյոք, ամեն մի դաշտամաս առան
 ձին վարել, դաշտասահմանը պահպանելով, թե
 ամբողջ դաշտը, իբրև մի ամբողջություն, մեկեն
 վարել։ Վերջինն ավելի ձեռնտու յեւ Յերբ հողը
 վարել պրծել են, առաջ եւ գալիս մի այլ հարց՝
 վարած հողը բաժանել, թե միասին ցանել և
 ապա բաժանել բերքը։ Յերբ հացը հասավ, հարց
 եւ ծագում—դեռ չվերցը սծ բերքը միմյանց մի-
 ջև բաժանել, թե միասին հնձել դաշտը և խուր-
 ձերը բաժանել։ Յերբ հունձը հավաքական աշ-
 խատանքով վերջացած եւ, հարց եւ տրվում—այդ
 խուրձերը միմյանց միջև բաժանել, թե միասին
 կալսել։ Միասին կալսելուց հետո իրար հարց են
 տուիս—հացահատիկը բաժանել, թե կոռպերա-
 տիկի միջոցով ծախելու փողը բաժանել միտյանց
 միջև։ Տրակտորը գյուղատնտեսության մեջ գոր-
 ծադրվելով, գյուղացու մտքերին տալիս եւ այս
 ընթացքը, վորը պատկերավորում եւ գյուղատըն-
 տեսական արտադրության պրոցեսի հանրացման
 հնարավոր ուղին»։

Ահա թե խոհրդային իշխանության պայ-
 մաններում, գյուղատնտեսության դարդացման
 վրա, ինչ ազդեցություն կարող եւ ունենալ գյու-
 ղատնտեսական խոշոր մեքենաների գործադրու-
 թյունը։ Բայց մեքենան տալիս եւ պետական խո-
 շոր արդյունաբերությունը և վորքան նա կարու-

ղանա գյուղատնտեսական շատ մեքենաներ տալ,
այնքան ել հաջող կընթանա գյուղացիական մանր
տնտեսությունների միացման գործը:

Ըսկ. Ռիկովի բերած տրակտորի որինակը
բավական ե, վորպեսզի ասենք - գյուղացիական
մանր տնտեսությունների վերակերտման հաջո-
ղությունը կախված ե մեր տնտեսության սո-
ցիալիստական տարրից՝ պետական խոշոր ար-
դյունաբերությունից:

ՆԵՊՀ ԱՄՐԱՑՆՈՒՄ	Վորպեսզի պետական արդյու-
Ե ԱՐԴՅՈՒՆԱԲԵ-	Նաբերությունը կարողանա
ՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ	վերակերտել գյուղացիական
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒ-	տնտեսությունը, անհրաժեշտ
ԹՅԱՆ ԿԱՊՀ	ե, վոր պետական արդյու-
	նաբերության և գյուղատնտեսության միջև գո- րություն ունենա հաստատուն և միշտ ամրացող կապ:

Այդ կապը ներկայումս կարող ե ամուր լի-
նել: Այս, կարող ե, յեթե պետական արդյունա-
բերությունն ու գյուղական տնտեսությունը փո-
խադարձաբար ապրանք մատակարարեն միմ-
յանց: Իսկ ներկա պայմաններում, պետական
արդյունաբերությունը կարող ե կապվել 20 մի-
լիոն գյուղացիական տնտեսությունների հետ
միայն առեւտրի միջոցով, շուկայի միջոցով:

Ռազմական կոմունիզմի շըջանում, քաղա-

քացիական կոիվսերի շրջանում, խորհրդային իշխանությունը արգելել եր ազատ առևտուրը։ Այդպահանջում եր մեր յերկրի պաշտպանության շահերը։ Ռազմական պաշտպանության խնդիրը մենք պետք եւ իրազործեյինք, ինչ գնով ել ուղում եր լինի, թեկուզ ի մսաս տնտեսական շինարարության։ Ստիպողական ճանապարհով (պարենմասնատրման միջոցով) գյուղացիությունից խլվում եր հացի ամբողջ ավելցուկը։

«Մենք պաշարված բերդի մեջ լինելով՝ չեմինք կարող այլ կերպ դիմանալ, քան մասնատրումը կիրառելով, այսինքն վերցնելով գյուղացիությունից այն բոլոր ավելցուկները, վոր նառներ, վերցնել նույնիսկ յերբեմն վոչ միայն ավելցուկները, այլ և մի բան ել դեռ գյուղացուն անհրաժեշտ յեղածից, միայն թե պահպանեյինք բանակի ռազմունակությունը և թույլ չտայինք, վոր արդյունաբերությունը լիովին քայքայվեր»։
(Լենին)։

Ռազմական կոմունիզմի տարիներին, կուսակցությունը ճիշտ ե, ձգտել ե գյուղի և քաղաքի մատակարարման գործը կազմակերպել առանց շուկայի ոգնության՝ պետական մարմինների միջոցով։ Սակայն քաղաքացիական կոիվների և տնտեսական քայլքայման (հատկապես արդյունաբերության քայլքայման) դաժան պայ-

մաններում, մաստակարարման այդ կենտրոնացման դործը կանոնավորելը դժվար էր, համարիանհնարին:

Վորն եր ազատ առևտրի վերացման հետեւ վանքը: Քաղաքացիական կոիմսերի վերջում խըզվել եր կապը գյուղացիական տնտեսության և արդյունաբնության միջև, վորը և ծանր ե անդրադարձել վողջ ժողովրդական տնտեսության վրա: Ուստի և կուսակցությունը ստիպված եր անցնել նոր տնտեսական քաղաքականության:

Կուսակցությունը, նոր տնտեսական քաղաքականությունը սկսել ե կիրառել (1921 թվի մարտին) պարենսմասնատրումից պարենհարկին անցնելով: Պարենհարկը նշանակում եր, թե պետության ոգտին գյուղացիությունից վերցվում եր նրա հացամթերքի ավելցուկի միայն մի մասը, իսկ մնացած մասը գյուղ սցին կարող եր ազատ վաճառել: Այսպիսով, պարենհարկը մըսցնելով արդեն, թույլատրվում ե և ազատ առևտուրը: Նորից սկսվում ե կապ հաստատվել պետական արդյունաբերության և գյուղատնտեսության միջև, սակայն այս անդան արդեն՝ շուկայի միջոցով:

Ժողովրդական տնտեսության այդ յերկու ճյուղերն ել սկսել են աճել և հասնում են նախապատերազմյան մակարդակին: Ներկայումս,

ամրացող պետական խոշոր արդյունաբերությունը շուկայի միջոցով, ապրանքափոխանակության միջոցով, այսնինքն նեպի ստեղծած հողի վրա, ավելի ու ավելի մեծ հնարավորություններ ե ձեռք բերում գյուղացիական տնտեսությունը վերակերտելու, նրան կոլեկտիվ սոցիալիստական հունի մեջ դնելու համար:

Նեղը ՍՏԵՂԾԵԼ ե նեպի միջոցով արդյունաբեզեկ ԿԱՊԻՏԱԼԻԶՄ բությունը կապվել ե գյուղատնտեսության հետ։ Նեղը հնարավորություն ե տալիս վերակերտելու գյուղացիական տնտեսությունը։ Յեվ վորքան արագ զարգանա մեր սոցիալիստական արդյունաբերությունն, այնքան ավելի շուտ կը վերակերտվի գյուղացիական տընտեսությունը։

Սակայն չպետք է մոռացության տրվի և գործի մյուս կողմը։ Նեղը հնարավորություն ե տվել, վոր զարգանան պետական արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, բայց միևնույն ժամանակ, նեղը մեր յերկրում կենդանացրել ե և մասնավոր կապիտալիզմը։

«Առետրի ազատությունը—կապիտալիզմի աճումն ե նշանակում», ասել ե Լենինը նեպի ըսկըում։ Ազատ առետրի պայմաններում, առանձին անհատների կողմից մեծ միջոցներ կուտակելու հնարավորություններ են ստեղծվում։ Այդ

միջոցները նրանք շրջանառության մեջ են դը-
նում և հարստանում։ Նեպի շրջանում, քաղա-
քում հանդես են յեկել առևտրականն ու մանր
արդյունաբերողը, գյուղում՝ կուլակը։ Մաս-
նավոր կապիտալիստը տնտեսության զանազան
տարրեր ճյուղերում մրցման մեջ ե մտնում պե-
տական արդյունաբերության հետ, պետական ու
կոպերատիվ առևտրի հետ։ Մեզնից յուրաքան-
չյուրը կարող ե դիսել մեր յերկրում զարգա-
ցող այդ պայքարը։ Մասնավոր առևտրականը
մրցում ե պետական և կոռպերատիվ առևտրի հետ,
նա նույնիսկ խորամանկություն բանեցնելով,
տեղտեղ հանդես ե գոլիս պետական և կոռպե-
րատիվ առևտրի դիմակի տակ։

Մասնավոր կապիտալը ձգտում է քայլայել
բանվոր դասակարգի ու գյուղացիության տըն-
տեսական դաշինքը։ Մասնավոր կապիտալը ձըգ-
տում է գյուղին ապրանք մատակարարել ավելի
արագ թափով և ավելի մեծ հաջողությամբ, քան
այդ անում ե բանվոր դասակարգը՝ պետական և
կոռպերատիվ առևտրի միջոցով։ Կուսակցության
11-րդ համագումարի համապատասխան բանաձեմն
ասում ե, վոր նեպի պայմաններում, «Շուկայի
միջոցով բազմամիլիոն գյուղացիության տնտե-
սական շահերի բավարարման հողի վրա մրցակ-
ցություն ե առաջ գալիս սոցիալիզմ կառուցող-

ների և կապիտալիզմը վերտկանգնելու ձգտումն ունեցողների միջև»:

Գյուղացիության տնտեսական շահերի բավարարում, դա հենց գյուղին անհրաժեշտ չտ քանակով, անհրաժեշտ ապրանքներ մատակարարելն եւ։ Այդ խնդրում, մասնավոր կապիտալը լուրջ թշնամի յեւ։ Ինչպես պետք եւ պայքարել նրա դեմ։ ԻնչՊԵՍ ԵՆՔ ՊԱՅ- ՅԵՐԲ ԽՈՍՔ Ե ԼԻՈՒՄ ՄԱՍՆԱ-
ՔԱՐՈՒՄ ՄԱՍՆԱ- ՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻ
ՎՈՐ ԿԱՊԻՏԱԼԻ
ԴԵՄ ԵՆ ՏԱԼԻՄ, — «Իսկ ԻՆՉՈՒ ՀՐ-
ՊՐԱՎԵԼ ՆԵՎՄԱՆԻ ԿԱՄ ԿՈՒԼԱԿԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ,
ՈՒՆԵԳՎԱՃՔԸ։ ԶԵ ՎՈՐ ԱՅԴ ԴԵՎՔՈՒՄ ՄԱՍՆԱՎՈՐ
ԿԱՊԻՏԱԼԸ ԿԸ ՊԿՎԻ ԻՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՌԵԺԻՄ»։
Նման դատողություններն, իհարկե, ճիշտ
չեն։

Ընդունենք թե, այսոր և յեթ, արգելվեց
մասնավոր առևտուրը։ Փակվեցին հարյուր հա-
զարավոր խանութներն և կրպակները, վորոնց
միջոցով սիլիոնավոր փութ ապրանքներ են հա-
նում սպառողին։ Հարդ եւ առաջ գալիս, արդյո՞ք,
պետական և կոռպերատիվ առևտուրը անմիջապես
կարող եւ փոխարինել ամբողջ մասնավոր առև-
տուրին։ Վհչ, չի կարող։ Այստեղ կը վնասվի առևտու-
րը, արդյունաբերական ապրանքները կը մնան պա-
րը, հետևաներում՝ չեն հասնի սպառողին։ Հետևանքն

այն կը լինի, վոր կը թուլանա արդյունաբերության
ու գյուղատնտեսության կապը:

Կամ թե չե, ընդունենք, թե բոլոր կուլակ-
ների ունեցվածքը (գյուղատնտեսական ինվեն-
տար և այլն) բռնագրավելու մասին որենք ե
հրատարակված։ Ի՞նչ կը ստացվեր դրանից։

Կուլակների հողերը կը մնային անմշակ, գյու-
ղացիության մյուս խավերը չեյին կարող մշակել
այն, քանի վոր միջակ և հատկապես չքավոր
գյուղացիությունը ներկայումս անզամ ի վիճա-
կի չեն մշակելու իրենց ոգտագործմանը թողած հո-
ղամասերը։ Կուլակների մոտ վարձված բատրակ-
ները կը մնային առանց աշխատանքի, քանի վոր
գյուղում աշխատող ձեռքերն առանց այն ել շատ
են։ Միաժամանակ կուլակների ունեցվածքը բը ո-
նազրավելով, յետ կը վանեյինք մյուս գյուղացի-
ների գյուղատնտեսական մեքենաներ ձեռք բե-
րելու, հողը կատարելագործված մեքենաներով
մշակելու ձգտումը։

Այսպիսով, առևտուրի արգելման կամ ունեց-
վածքի բռնագրավման միջոցները միայն կավե-
լացնելին մեր աղքատությունը։ Իսկ խորհրդա-
լին իշխանությունը - սոցիալիստական իշխանու-
թյուն ե. նա շահագրղոված ե, վորպեսզի ան-
ընդհատ աճի յերկը բարեկեցությունը, տարեց-
տարի զարգանա արտադրությունը, մեծանա գյու-

ղատնտեսական մթերքների արտադրությունը։
Սոցիալիզմի ճանապարհը, աղքատացման ճանա-
պարհը չե։ Սոցիալիզմի ճանապարհը յերկրի բա-
րեկեցության աստիճանական բարձրացման ճա-
նապարհն ե,

Իսկ վո՞րն ե մասնավոր կապիտալի դեմ տար-
վող մեր պայքարի իսկական ու ճշմարիտ մի-
ջոցը։ ×

Մասնավոր կապիտալի դեմ տարվող մեր
պայքարի գլխավոր միջոցը, ներկայումս, հանդի-
սանում ե տնտեսական մրցակցությունը։ Մենք
չենք արգելում, վոր մասնավոր առևտրականը
զբաղկի առևտրով։ Բայց մենք պայքարում ենք
նրա դեմ պետական ու կոռպերատիվ առևտուր
ստեղծելով։ Իսկ յեթե մեր պետական առևտրի
գործը լավ կազմակերպվի, յեթե պետությունը
աջակցի նրա սշխատանքներին, ապա կոռպերա-
տիվ ու պետական առևտուրը կը հաղթահարի մաս-
նավոր առևտրականին։

Մասնավոր կապիտալի դեմ վարած պայքա-
րում, պետությունը դիտողի դերում չե, վոր
հանդես ե դալիս։ Նա մեծ հարկեր ե վերցնում
մասնավոր կապիտալից, պետությունը մասնա-
վոր կապիտալին կամ վարկ չի տալիս, կամ յե-
թե տալիս ե, ավելի պակաս ձեռնտու պայման-
ներով, քան ստանում են պետական ու կոռպե-

ըատիվ ձեռնարկները։ Դեռ ավելին, պետությունը լերբեմն սիջամտում եւ մասնավոր կապիտալիստի գործերին, նրա շահադիտական նպատակները սանձահարելու նկատառումով։

ԻՆՉՈՒ ՄԵԶ ՀԱՄԱՐ Մասնավոր կապիտալն աճել ՍԱՐՍԱՓԵԼԻ ԶԵ Ե ՆԵՊԻ շնորհիվ։ Այդ հան- ՄԱՍՆԱՎՈՐ գամանքը մեր կուսակցու- ԿԱՊԻՏԱԼԸ թյունը նախատեսել ե հենց

ՆԵՊԻ սկզբում։ Մեզ համար բնավ սարսափելի չե մասնավոր կապիտալի ու ժեղացումը, վորով- հետև ել ավելի սեծ չափով աճում ու ամրա- նում են ժողովրդական տնտեսության սոցիա- լիստական մասերը, բանվոր դասակարգի տնտե- սական իշխող բարձունքները—պետական ար- դյունաբերությունը, տրանսպորտը, արտաքին ու ներքին պետական ու կոպերատիվ առևտուրը, բանկերը։

Մեր ձեռքի տակ յեղած թվերը ցույց են տալիս, վոր մեր տնտեսական իշխող բարձունք- ներն աճում են ավելի արագ։ բան մասնավոր կապիտալիզմը։ Մենք տեսնում ենք, վոր տնտեսու- թյան սոցիալիստական մասերը, յերկրի ամբողջ տնտեսության մեջ որսորե մեծ տեղ են գրա- վում, վոր նրանք տնտեսապես գերակշռող ուժ են դառնում։ Այդ պայմաններում, մեզ համար սարսափելի չե կապիտալիզմը։

ՆԵՊԼ ՊՐՈԼԵՏԱՐԻԱ- Այս ամենն ասելուց հետո,
ՏԻ ՄԻԱԿ ՃԻՇՏ մենք կարող կրկնենք հաս-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱ- կանալ նեպի հետեւյալ ձևա-
ՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ Ե կերպումը, վոր տվել ե ըն-
կեր Ստալինը կուսակցության 14-րդ համագու-
մարում։

«ՆԵՊՐ պրոլետարական պետության հատուկ
քաղաքականություն Ե, վորը թույլատրում Ե
կապիտալիզմի գոյությունը, պայմանով, վոր պրո-
լետարական պետության ձեռքին են գտնվում
իշխող բարձունքները, վոր հիմնված Ե կապիտա-
լիստական և սոցիալիստական տարրերի պայքա-
րի վրա, հիմնված Ե սոցիալիստական տարրերի
դերի ի մաս կապիտալիստական տարրերի՝ աճ-
ման վրա, հիմնված Ե կապիտալիստական տար-
րերի նկատմամբ սոցիալիստական տարրերի հաղ-
թանակի վրա, հիմնված Ե դասակարգերի վե-
րացման, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի
կառուցման վրա»։

Ահա թե ինչու կենինը նեպը համարել Ե
«պրոլետարիատի տնտեսական միակ ճիշտ քա-
ղաքականությունը»։ Դրանում մեզ համոզում են
նեպի 5 տարվա արդյունքները։

ՆԵՐԻ ՀԻՆԳ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կուսակցության 14-րդ համագումարը, վոր հրավիրվել է 1925 թվի դեկտեմբերի վերջերին, քննության և առել նոր տնտեսական քաղաքականության կիրառման հինգ տարվա արդյունքները: Վորպեսզի առաջ բերվող թվերը ավելի համոզիչ լինեն, տեսնենք, թե ինչ վիճակում եր մեր տնտեսությունը նեպի կիրառման սկզբում՝ 1921 թվի մարտ ամսում և ինչպես մենք սկսեցինք վերականգնել մեր տնտեսությունը:

ԱՄԵՆԻՑ ԱՌԱՋ Ութը տարի տևող իմպերիակերպանական լիստական ու քաղաքացիական կան կոփման պատճառով թշունը քայլավել եր մեր յերկրի տնտեսությունը^{*)}) Արդյունաբերության արտադրութը հասել եր նախապատերազմյան չափի մեկ հինգերորդ մասին: Գյուղացիությունը խոշոր չափով կրճատել եր սերմանման տարածությունը: Վոչ հաց կար և վոչ ել վառելիք: Աճում եր գյուղի անբավականությունը:

^{*)} Իմպերիալիստական կոփմը տևել է 1914 թ. ողոստոսից մինչև 1918 թվի նոյեմբերը: Համաշխարհային հարստությունները վերաբանելու առթիվ, իմպերիալիստները, արյունոտ սպանդանոցի՝ պատերազմի մեջ են քաշել ամբողջ ժողովուրդներ: Խորհրդային յերկըների աշխատավորությունը դադարել է իմպերիալիստական պատերազմին մասնակցել 1917 թվի հոկտեմբերին, պլուխտարական հեղափոխության հաղթանակի շնորհիվ:

1921 թվի սկզբներին քաղաքացիական կլո-
փի ճակատներում ջախջախվել երին մեր դիմա-
վոր թշնամիները։ Յերկիրը հնարավորություն եր
ստացել խաղաղ շինարարության անցնելու։ Կու-
սակցության առաջ դրված եր տնտեսության վե-
րականգնման խնդիրը։ Սակայն մեր տնտեսու-
թյան յերկու ճյուղերը՝ արդյունաբերությունն
ու գյուղական տնտեսությունը այնքան սերտ են
կապված միմյանց հետ, վոր մեկն առանց մյու-
սի վերականգնելն անհնար եր։


85691

Բայց ինչից պետք ե սկսվեր տնտեսության
վերականգնման աշխատանքը։ Լենինը այն ժա-
մանակ հաճախ ե ընդդեմ, թե պետք ե սկսել
գյուղատնտեսությունից։

«Այժմ ամենից անհետաձգելի յեն այն մի-
ջոցները, վորոնք ընդունակ կը լինեն անմիջապես
բարձրացնելու գյուղատնտեսության արտադրա-
կան ուժերը»—ասել ե Լենինը։

A 85584

Արդյունաբերության գարգացման համար
պահանջվում եր ամենից առաջ բարձրացնել գյու-
ղատնտեսությունը։ Յեվ կուսակցության ու խոր-
հրդացին լիշխանության ձեռնարկած առաջին մի-
ջոցները ն գատակ ունեյին առաջին հերթին բա-
րելավելու գյուղատնտեսության դրությունը,
Զեռնարկած միջոցներից մեկն ել այն եռ մոր
պարենսմասնարդումը փոխարինվեց գարենամա-



կով։ Նույն նորատակին ելին հետապնդում և ոյտ-
րենհարկի բանակի կրծտառումը, արդյունարերա-
կան ապրանքների զների իչ ուժը և այլն։

Կուսակցության ձիշու քաղաքականության
շնորհիվ լերկրի աժբողջ անտեսությունը բարձ-
րանում է արագ թափով, նույնիսկ ավելի ա-
րագ, քան մենք ելինք սպասում։ Գյուղատնտե-
սության զարգացման հողի վրա, բուռն թափով
սկսում է աճել և արդյունարերությունը։ Մեր
յերկիրը, բանվորների ու գյուղացիների ջանքե-
րով, հինգ տարվա ընթացքում բուժել է յեր-
կար տարիների ընթացքում պատերազմի պատ-
ճառած վերքերը։

**Այդ բանում համոզվելու համար բերենք մի
քանի թվեր։**

ԳԻՈՒՂԱՏՆՏԵՍՈՒ-	ՄԵՐՄԱՆՄԱՆ տարածության
ԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆ-	աճումը պարզելու համար
ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ	դիմենք հետեւյալ աղյուսա- կին։

Մերմանման տարածությունը

(միլիոն հեկտարներով)

1913թ. 1921թ. 1922թ. 1923թ. 1924թ. 1925թ.

Ընդամենը

116	94	81	95	103	—
------------	-----------	-----------	-----------	------------	----------

Միայն հացահատիկ

101	83	70	82	87	97
------------	-----------	-----------	-----------	-----------	-----------

Նվաճումներն ավելի շոշափելի լեն տեխնիկական բույսերի մշակման բնագավառում։ Հատկապես մեծ չափով աճել ե կտավատի մշակութը, վոր յերեսում ե հետեւյալ դիագրամից։

Կտավատ ե հավաքվել
(հազար տոններով)

1921 - 22թ.	1923 - 24թ.	1925 - 26թ.	1913թ.
165	165	319	395

Կանեփ ե հավաքվել
(հազար տոններով)

125	341	459	408
-----	-----	-----	-----

Ճակնդեղ ե հավաքվել
(հազար տոններով)

429	1832	7891	10861
-----	------	------	-------

Բամբակ ե հավաքվել
(հազար տոններով)

25	154	588	632
----	-----	-----	-----

1922 թվին Խորհրդայից Միության մեջ յեղել ե $137\frac{1}{2}$ միլիոն գլուխ անասուն, վորը 1926 թվին բարձրացել ե մինչև 168 մ. ($167,800,000$) և նախապատերազմյան քանակից ($183,300,000$) պակասում ե միայն $15\frac{1}{2}$ միլիոնով։ Խոզերի և խոշոր յեղջյուրավոր անասունների քանակը ներկայումս ավելի շատ ե, քան կար պատերազմից առաջ։

Յեթե այն ամենը, ինչ արտադրվում է գյուղական տնտեսության մեջ, վերածենք նախապատերազմյան ռուբլիների, ապա կստանանք այսպիսի թվեր. —

Գյուղատնտեսության արտադրությունը
(նախապատերազմյան միլիոն ռուբլիներով)

1913	1922—23	1923—24	1924—25	1925—26
12,826	5,563	8,652	9,128	10,860

Նշանակում ե, 1924—26 թ. գյուղատնտեսությունը հասել է նախապատերազմյան մակարդակի իննը տասներորդական մասին:

ԻՇԽՈՂ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ իշխող բար-
բԱՐՁՈՒՆՔՆԵՐԻ ձունքների աճումը մեզ ցույց
ԱՃՈՒՄԸ ե տալիս հետեւյալ դիագրամը.

Խոշոր արդյունաբերությունն արտադրել ե
(միլիոն ռուբ. հաշված նախապատերազմյան գներով)

1921—22 թ. 1923—24 թ. 1925—26 թ.

նախապատերազմյան մակարդակ

1493	2627	5280
$100^0/0$	$176^0/0$	$352^0/0$

Յերկարուղիները բեռ են փոխադրել
(հազար տոններով)

1921—22 1923—24 1924—25

նախապատերազմյան մակարդակ

40	68	83
$100^0/0$	$169^0/0$	$208^0/0$

Բանկերի միջոցները

1922—23 1923—24 1924—25

(միլիոն չերվոն ռուբլիներով)

$\frac{832}{100^0/0}$	$\frac{1749}{210^0/0}$	$\frac{3427}{415^0/0}$
-----------------------	------------------------	------------------------

Ներմուծումն ու արտածումը

(նախապատերազմյան միլիոն ռուբլիներով)

1921—22 1923—24 1925—26

նախապատերազմյան մակարդակով

Ներմուծում՝	$\frac{271}{100^0/0}$	$\frac{200}{74^0/0}$	$\frac{385}{142^0/0}$
Արտածում՝	$\frac{64}{100^0/0}$	$\frac{340}{530^0/0}$	$\frac{454}{710^0/0}$
Ընդամենը՝	335	540	839

Այս թվերին պետք է ավելացնել ապրանքների ամբողջ քանակից պետական և կոռալերատիվ առևտրի միջոցով անցել ե.

1923—24 թվին՝ $64^0/0$

1924—25 թվին՝ $70^0/0$

1925—26 տարում, արդյունաբերությունը համարյա հասել է նախապատերազմյան մակարդակին: Վերջին յերկու տարվա ընթացքում հատկապես արագ թափով աճել է մետաղաբույսներերությունը, վորի նշանակության մասին սենք գիտենք առաջին զրուցից: Միայն 1924. 25

տարում մետաղի արդյունաբերության արտադրութը մեծացել է 2 անգամ։ Իսկ ընթացիկ 25-26 տարում, չնայած տնտեսական դժվարություններին, մեր արդյունաբերությունն աճել է 40 տոկոսով։

Արդյունաբերության ծավալման հետ միասին աճում է, և բանվոր դասակարգը։ Այդ առթիվ ահա թե ինչ են ասում թվերը. — առ 1-ն ապրիլի 1924 թվի, արդյունաբերության բոլոր ճյուղերում, հաշված և սեղոնային բանվորներին և գյուղատնտեսական բանվորներին, աշխատավայրին համաձայն մենք ունեյինք 5 միլիոն 500 հազար բանվոր. սրանցից մեկ միլիոն բատրակներ և 760 հազար գործազուրկներ։ Առ 1-ն հոկտեմբերի 1925 թվի, վարձու բանվորների թիվը 7 միլիոնից ավելի յեր, վորից 1 միլիոն 200 հազար բատրակներ և 715 հազար գործազուրկ ներ։

Միաժամանակ անընդհատ բարձրացել է և աշխատավարձը։ Արդյունաբերության մեջ բանվորների միջին ամսական աշխատավարձն, չեղվոն ոուրիներով հաշված, 1924 թվի ապրիլին կազմում եր 35 ոուրի կամ նախապատերաժմանի 62 տոկոսը, — 1925 թվի սեպտեմբերին 50 ոուրի կամ նախապատերաժմանի 95 տոկոսը։

ՏԵՇԵՍՈՒԹՅԱՆ ԱՌ-
ՅԵԱԼԻՍԱԿԱՆ ՄԱ-
ՍԵՐՆ ԱՎԵԼԻ ԱՐԱԳ
ԵՆ ԱՃՈՒՄ.

Մեր անուեառության ոսցիա-
լիստական մասերն ավելի ա-
բագ են աճում, քան կազի-
տալիստական մասերը։ Այդ
առթիվ ուսենք հետեւյալ տվյալները։ Յեթե համե-
մատելու լինենք պետական ու կոռպերատիվ ար-
դյունաբերության արտադրությունը մասնավոր
արդյունաբերության արտադրություն հետ, ապա
կը տեսնենք, վոր 1923-24 թվի պետական ու
կոռպերատիվ արդյունաբերության արտադրու-
թյունը կազմել է ամբողջ արդյունաբերական
արտադրության մեկ տարվա 76 տոկոսը իսկ
մասնավոր՝ 23,7 տոկոսը։ Իսկ 1924-25 թվին
պետական և կոռպերատիվ արդյունաբերության
բաժինը կազմում է 79,3 տոկոսը։ մասնավոր ար-
դյունաբերության բաժինն արդեն վոչ թե 23,7
տոկոս է, այլ 20,7 տոկոս։

Յեթե վերցնելու լինենք ներքին առևտուրը,
ապա կը տեսնենք, վոր 1923-24 թվին պետա-
կան ու կոռպերատիվ առևտրի բաժինը հավասար
եր ներ/ին առևտրի ամբողջ շրջանառության 65
տոկոսին, մասնավոր կազմուալի բաժինը՝ 35 տո-
կոսին։ Իսկ հետեւյալ տարում, 1924-25 թվին,
պետության և կոռպերացիալի բաժինը հավա-
սար եր 74,7 տոկոսին, մինչդեռ մասնավոր կա-
զմուալի բաժինը՝ 35-ից իշել եր 24,9 տոկոսի։

Ընդհանուր շրջանառության մեջ մասնավոր կապիտալի բաժինը նվազում է, պետաթյան և կոռպերացիալի բաժինն աճում է: Պետական և կոռպերատիվ առևտուրը իր զիրքերն ամրացրել եւ մանրածախս առևտրի մեջ, վորտեղ ուժեղ ի մասնավոր կապիտալը: 1923-24 թվին մասնավոր կապիտալի բաժինը մանրածախս առևտրի մեջ կազմում եր 57 տոկոս, իսկ 1924-25 թվին՝ 44,3 տոկոս:

Ահա ինչու կուսակցության 14-րդ համագումարն իր բանաձեռում ասում է. «Ժողովրդական տնտեսության ներսում նրա բաղկացուցիչ մասերի բազմազանությամբ հանդերձ (բնականգյուղացիական անտեսության, մանր ապրանքային արտադրություն, մասնավոր-սեփականատիրական կապիտալիզմ, պատական կապիտալիզմ և սոցիալիզմ) խիստ կերպով բարձրանում ե սոցիալիստական արդյունաբերության պետական և կոռպերատիվ առևտրի, ազգայնացրած վարկի և պրոլետարական պետության իշխող ժյուսքարձունքների տեսակարար կշիռը:

Այսպիսով ակներև ե պրոլետարիատի տընտեսական հարձակումը նոր տնտեսական բաղաբականության հիմունքներով և ԽՍՀՄ առաջխաղացումը դեպի սոցիալիզմ»:

14 րդ համագումարի ոպողիցիան չհավատա

լով հաներձ մեր յերկրում սոցիալիզմի կառուց-
ման հնարավորություններին, հայտարարում եր,
վոր իրը թե մենք միշտ նահանջում ենք մաս-
նավոր կապիտալի հանդեպ։ Ոպողիցիային սար-
սափ եր պատճառում մասնավոր կապիտալիզմի
աճումը, մի բան, վոր անխուսափելի յե նեպի
պայմաններում։ Կուլակի և նեպմանի (նոր բուր-
ժուազիայի) ուժեղացման փաստից խուճապի
յենթարկվելով, ոպողիցիան չի կարողանում նը
կատել, վոր մեր տնտեսության սոցիալիստական
տարրերն աճում են ավելի արագ քան կապի-
տալիստական տարրերը և վոր մենք տարեց տա-
րի մոտենում ենք սոցիալիզմին։

ՅԵՐԿՐԻ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նեպի շրջանում բանվոր դասակարգի առաջ
դրված առաջին խնդիրն եր—վերականգնել ցա-
րական Ռուսաստանից ժառանգած տնտեսությու-
նը։ Բայտ վորում, առաջին հերթին պետք եր վե-
րականգնել գյուղատնտեսությունը։ Կուսակցու-
թյան ղեկավարությամբ լուծված ե այդ խնդի-
րը։ Ինչպես զիտենք, արդեն սերմանման տարա-
ծությունը մոտենում ե նախապատերազման
չափերին։ Արդյունաբերությունը՝ նույնպես։

Ներկայումս մեր առաջ ծառանում են նոր,
ավելի բարդ խնդիրներ։ Մեղ ժառանգություն

մնացած համարիա բոլոր գործարաններն ոգտագործված են։ Արդյունաբերության բնագավառում ռմեր հետագա քայլերը նշանակում են՝ արդյունաբերության ծավալումը նոր տեխնիքական պատվանդանի վրա, այսինքն, նոր վերասարքավորում, նոր գործարանների կառուցում։ Մա շատ դժվար գործ ե» (Ստալին)։ Պետք ե ծավալել ելեքտրոֆիկացիան, վորպեսզի արդյունաբերությունն եժան եներգիա ստանա։ Ասհըրաժեշտ ե նոր գործարաններ կառուցել, հները վերասարքավորել։ Մեզ պետք են նոր շոգեմեքենաներ, լերկաթուղային նոր ցանցեր, վորպեսզի տրանսպորտը կարողանա բավարարել լերկրի պահանջները։

Արդյունաբերական այդ նոր շինարարությունից ե կախված այժմ մեր տնտեսական հետագա վողջ զարգացումը, գյուղական տնտեսության բարձրացումը։ Գյուղական աշխատանքի արտադրողականության բարձրացման համար, գյուղի բարեկեցության բարձրացման համար անհրաժեշտ ե գյուղին տալ տասնյակ և հարյուր հազարավոր գյուղատնտեսական մեքենաներ։ Մեքենան պետք ե արագացնի բաժան-բաժան գյուղացիական մանր տնտեսությունների միացման ընթացքը։ Մեքենան պիտի նպաստի խոշոր կոլեկտիվ տնտեսություններ ստեղծվելուն։ Մեքենան պի-

տի գյուղն ազատի իր ներկալիս չքավորությունից։ Սակայն գյուղին անհրաժեշտ քանակով մերենաներ մատակարարելը հնարավոր ե այն չափով, ինչ չափով վոր կը զարգանա արդյունաբերությունը։

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԸՆ-
ՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱ-
ՑՈՒՄԸ ԿԱԽՎԱԾ Ե
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒ-
ԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒ-
ՄԻՑ

Գյուղատեսության զար-
գացումը կախված ե արդյու-
նաբերության հետագա զար-
գացումից։ Արդյունաբերու-
թյունը զարգանալով իր յե-
տեսից «տանում ե» ժողովը-
դական ամբողջ տնտեսությունը, հատկապես գյու-
ղական տնտեսությունը։ «Արդյունաբերությունն
առաջ ընթանալով, սկսում ե իրեն յենթարկել
մասնավոր արդյունաբերությունը, իրեն հարմա-
րեցնել և իր յետեսից տանել տնտեսության մյուս
բոլոր ձևերը։ Այդպես ե արդեն գյուղի բախտը,
վոր նա պետք ե գնա քաղաքի յետեսից, խոշոր
արդյունաբերության յետեսից» (Ստալին)։ Կու-
սակցության 14.րդ համագումարի բանաձևում
ասված ե, վոր «արդյունաբերությունն ավելի
ու ավելի դառնում ե ավանդարդը (առաջապա-
հը) իր յետեսից տանելով ժողովրդական տնտե-
սությունն ամբողջովին»։

Նեղի առաջին շրջանում դրությունն արդ
պես չեր։ Նեղի առաջին շրջանում, ինչպես մենք

տեսանք, գյուղատնտեսությունն իր յետեից տանում եր արդյունաբերությանը։ Ներկայումս փոխվել ե դրությունը։ «Յեթե այն ժամանակ, նոր տնտեսական քաղաքականության առաջին շրջանում, ժողովրդական տնտեսության զարգացման գործն ամբողջությամբ դեմ եր առել գյուղատնտեսության, ապա այժմ նա դեմ ե առնում և արդեն դեմ ե առել ինդուստրիալի (արդյունաբերության) ուղղակի ծավալմանը» (Ստալին):

Ահա ինչու կուսակցության 14 րդ համագումարը մոտակա սի շարք տարիների համար առաջադրել ե յերկրի ինդուստրիացման ղեկավար հրահանգը։

Խորհրդային Միությունը գերազանցապես հողագործական յերկիր ե։ Նախապատերազմյան շրջանում արդյունաբերությունը տվել ե 7 միլիարդ ռուբլու ընդհանուր արտադրույթ, իսկ գյուղատնտեսությունը՝ 13 միլիարդ, համարյա 2 անգամ ավելի շատ, քան տվել ե արդյունաբերությունը։ Նույն փոխհարաբերությունն ե տիրում և ներկայումս։ Մեր անելիքն ե—գերազանցապես հողագործական յերկիրը դարձնել գերազանցապես արդյունաբերական յերկիր։

Դրա համար մեզ հարկավոր ե առաջին հերթին զարգացնել ծանր արդյունաբերությունը,

վորը հանդիսանում ե ժամանակակից վողջ ին-
դուստրիայի հիմքը: (Ծանր արդյունաբերություն
ե կոչվում վառելիքի՝ քարածխի ու նավթի, և
մետաղի՝ մետաղաձուլական և մեքենաշինարա-
րական արդյունաբերությունը):

Առաջին գրուցի մեջ մենք ասել ենք, թե
քարածուխն ու նավթը ինչ նշանակություն ու-
նեն ժողովրդական տնտեսության համար: Յեր-
կրի տնտեսական ուժը չափվում ե յերկրի ներ-
սում ձեռք բերվող վառելիքի քանակով, ձուլ-
վող չուգունի ու պղնձի քանակով, պատրաստ-
վող մեքենաների քանակով:

Մինչև հիմա մենք ստիպված ենք մեր գոր-
ծարանների սարքավորման և գյուղատնտեսու-
թյանն անհրաժեշտ մեքենաների մի մասը բերել
արտասահմանից: Դրանով իսկ մենք բավակա-
նաչափ կախումն ենք ունենում արտասահմա-
նից՝ կապիտալիստական տնտեսությունից:

Մեր պայքարի փորձն ասում ե, թե հնա-
րավոր ե, վոր մենք ստիպված լինենք յերկար
տարիներ կողք-կողքի զարգանալ կապիտալիս-
տական՝ ավելի բարձր արդյունաբերություն ու-
նեցող պետությունների հետ միասին: Մենք ա-
մեն կերպ պետք ե զարգացնենք մեր տնտեսա-
կան կապերն այդ պետությունների հետ, վորով-
հետև ամբողջ ժողովրդական տնտեսության զար-

գացման շահերի տեսակետից դա մի անհրաժեշտություն եւ:

Սակայն դրա հետ միասին անհրաժեշտ եւ, վոր պեսզի «կապիտալիստական շրջապատման պայմաններում Խորհրդային Միությունն ամենաին չղառնա համաշխարհային կապիտալիստական սիստեմի մի տնտեսական հավելված, այլ հանդիսանա սի ինքնուրույն տնտեսական միավոր» (14-րդ համագումարի վորոշումներից):

Իսկ յերկրի տնտեսական ինքնուրույնությունն ապահովելու համար, պետք եւ, վոր «մեքենաներ ու սարքավորում ներմուծող յերկրից, Խորհրդային Միությունը դառնա—մեքենաներ և սարքավորում արտադրող յերկիր» (14-րդ համագումարի վորոշումներից):

Պետք եւ այնպես անել, վորպեսզի արդյունաբերության ծավալման, գյուղատնտեսության զարգացման ընթացքում մենք կարողանանք հենվել մեր սեփական արտադրական սիջոցների վըրա: Ահա թե ինդուստրիացման խնդրում ինչույն գլխավոր տեղը բռնում ծանր արդյունաբերության զարգացումը:

ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՄԱՆ Լենինի ամենագլխավոր ԹԱՓՀ ՅԵՎ ՅԵՐԿՐԻ վանդներից մեկը—դա բան-ՄԻԶՈՑՆԵՐԸ վոր դասակարգի և գյուղացիության միությունն եւ: Այդ միության մեջ

ղեկավարող դերը պատկանում ե բանվոր դասակարգին։ Այդ միության հիմք ե հանդիսանում արդյունաբերության և գյուղատնտեսության զոդումը։

Պետական խոշոր արդյունաբերությունը—սոցիալիստական շինարարության հիմքն ե։ Արդյունաբերությունն իր զարգացմամբ վերակերտում ե միլիոնավոր գյուղացիական մանր տընտեսություններ։

Արդյունաբերության զարգացման համար գործ են գրվում կուսակցության և բանվոր դասակարգի բոլոր ուժերը։ Սակայն Լենինը սովորեցրել ե, վորպեսզի արդյունաբերության ծավալման գործում միշտ հաշվի առնվի գյուղատնտեսության կարիքները։ Կուսակցությունը կիրառում ե այդ հաստատ ու համառ կերպով։

Գյուղացիական տնտեսության հետ զոդվելու Լենինի փորձված քաղաքականությունը մեր կուսակցությունը գործադրում ե և ներկայումս՝ յերկրի ինդուստրիացման կուրսը կիրառելիս։

Ինդուստրիացման խնդրի վրա Լենինը մի քանի խոսքով կանգ ե առել իր վերջին («Լավ ե քիչ, բայց լավ») հոդվածներից մեկում։

«Մեր պետության մեջ մեծագույն խնայողության միջոցով պետք ե տնտեսել ամենափոքր մեր միջոցները մեր խոշոր մեքենայական ին-

դուստրիայի զարգացման համար, ելեքտրիֆիկացիայի, հիդրոտորֆի զարգացման համար, Վոլխովստրոյի կառուցումն ավարտելու համար և այլն:

Սրա մեջ և սիայն սրա մեջ ե լինելու մեր հույսը։ Միայն այդ ժամանակ մենք կարող կլինենք, պատկերավոր արտահայտվելով՝ փոխադրվել մի ձիուց մյուսը, այսինքն գյուղացիական, գեղջկական նիհարած ձիուց, գյուղացիական քարքայված լերկրի պետքերին հարմարեցված տընաեսությունների ձիուց, փոխադրվել այն ձին, վոր փնտրում ե և չի կարող չփնտրել իրեն համար պրոլետարիատը՝ խոշոր մեքենական ինդուստրիայի, ելեքտրիֆիկացիայի, Վոլխովստրոյի ձին»։

Լենինի այս ասածները համեմատենք կուսակցության 11-րդ համագումարին ասած նըրա հետևյալ խոսքերի հետ։

«Ամբողջ խնդիրն այն ե, վորպեսզի հիմա առաջ շարժվենք անհամեմատ ավելի լայն, ավելի զորավոր մասսայով, վոչ այլ կերպ, քան գյուղացիության հետ, ապացուցելով նրան գործով, պրակտիկայով, փորձով, վոր մենք սովորում ենք և կը սովորենք ոգնել նրան ու տանել նրան դեպի առաջ...»

«Զոդվել գյուղացիական մասսայի հետ, շարքային աշխատավոր գյուղացիության հետ և ըս-

կսել առաջ շարժվել, անչափորեն, անվերջորեն, տվելի դանդաղ, քան մենք յերազել-ենք, բայց դրա փոխարեն, տինալես, վոր իրոք մեզ հետ շարժվի տմբողջ մասսան։ Այդ դեպքում ժամանակին կառաջանա այդ շարժման այնպիսի մի արագացում, վորի մասին այսոր յերազել անզամ չենք կարող։

Կամ արդյոք հակասություն «խոշոր ինդուստրիայի ձին փոխադրվելու» ձգտման, այսինքն ինդուստրիացման կուրսի և դանդաղ, սակայն վողջ գյուղացիական մասսայի հետ սիասին առաջ շարժվելու լենթադրության միջին թնավ վոչ։ Այդ միայն նշանակում ե, վոր արդյունաբերության զարգացման խնդրում այնքան ել արագ չպետք ե առաջ շարժվել, վոր շարունակ պետք ե հաշվի առնել և գյուղացիական տնտեսության մակարդակը։

Այժմ մենք պետք ե նոր արդյունաբերական ծրագիրներ սահմանենք։ Այդ ծրագիրները պետք ե կազմել խիստ համաձայնեցնելով լիրկրի միջոցների և մասնավորապես գյուղատնտեսության միջոցների հետ։ Կուսակցությունը չի կարող համաձայնվել այն ընկերների հետ, վորոնք առաջարկել ան արագացնել ինդուստրիացման թափը, առանց արժանի չափով հաշվի առնելու մեր յերկրի միջոցները։ Մեր կուսակցությունն այդ

չի կարող անել, վորովհետև դրանով իսկ կը խախ-
տենք կուսակցության ամբողջ տնտեսական քա-
ղաքականությունը:

ՄԻԶՈՑՆԵՐԻ ԳԼԽԱ- Յերկրի ինդուստրիացման
ՎՈՐ ԱՂԲՅՈՒԽԸ ՆԵՐ. համար անհրաժեշտ ե, վոր-
քին կոհանություն ե պեսզի պետությունը տա-
րեց-տարի խոշոր գումարներ հատկացնի ար-
դյունաբերության: Նոր գործարանների կառուց-
ման, հների վերասարքավորման համար պահանջ-
վում են հսկայական միջոցներ: Մեր յերկիրը
վորտեղից կարող ե վերցնել այդ միջոցները:

Մենք չենք կարող հույս դնել դրսի ռոգնու-
թյան» վրա: Մենք հազիվ թե կարողանանք իմ-
պերիալիստական պետություններից մեզ համար
ձեռնաու պայմաններով խոշոր վարկ ստանալ,
իսկ վորեե ստրկական կամ կիսաստրկական պայ-
մաններով վարկ ստանալ մենք չենք կարող:
Խորհրդային իշխանությունը նման «ռոգնության»
կարիք չի զգում:

Յերկրի ինդուստրիացման միջոցների գըլ-
խավոր աղբյուրը հանդիսանում ե մեր յերկրի
ներքին միջոցները, մեր ներքին կուտակումը,
Մեր անելիքը հանգում ե նրան, վորպեսզի շա-
րունակենք անընդհատ մեծացնել մեր միջոցնե-
րը, վորպեսզի կարողանանք մեր ներքին միջոց-

ներն ամբողջապես ոգտագործել ինդուստիաց-
ման համար:

Բայց մեզ մոտ կան արդյոք ներքին կու-
տակման բավական խոշոր հնարավորություններ:
Հոկտեմբերյան հեղափոխությունը խորհրդավին
իշխանության համար ստեղծել ե ներքին կու-
տակման խոշոր հնարավորություններ:

Ներքին կուտակման միջոցներից մեկն ա-
ռաջին հերթին հանդիսանում ե ազգայնացրած
պետական արդյունաբերությունը: Ներկայումս
իսկ պետական արդյունաբերությունը տալիս ե
վորոշ շահութ, վորը տարեց-տարի ավելի կը մե-
ծանա:

Կուտակման աղբյուր ե հանդիսանում ար-
տաքին առևտուրը, վորը լիովին գտնվում ե պե-
տության ձեռքում: Նման աղբյուրներ են հան-
դիսանում նաև ներքին առևտուրը, ազգայնացր-
րած բանկերը, տրանսպորտը և այլն: Մեր յեր-
կրի ինդուստրիացյան համար ներքին կուտակ-
ման այս աղբյուրները միանգամայն բավարար
են: Սակայն չի կարելի ասել, թե մենք սովո-
րել ենք ոգտագործել մեր ներքին կուտակման
հնարավորություններից յուրաքանչյուրը: Ներ-
քին կուտակման հնարավորություններն ոգտա-
գործելու կարգավորման խնդրում դեռ ունենք
շատ բացեր, հսկայական անելիքներ:

ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼԻԶԱՑ- Մեր յերկրի ինդուստրի-
ՅԱՆ ՑԵՎ ԳՅՈՒՂԱ- ացումը չի իրազործվի, յե-
ՏԻՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻ- թե չոգտագործվեն գյուղա-
ԶՈՑՆԵՐԸ տնտեսության միջոցները:
Գյուղատնտեսության միջոցներն ոգտագործելու
յերեք հնարավորություն կա: Գյուղատնտեսա-
կան միջոցները կարելի յե ոգտագործել ա) ար-
դյունաբերական ապրանքների գների, բ) հար-
կերի և գ) գյուղացիական խնայողությունները
վարկային հիմնարկների մեջ հավաքելու ճանա-
պարհով:

Ինդուստրիալիզացիան արագ թափով առաջ-
տանելուն կողմնակից մի խումբ ընկերները (այս-
պես կոչված «գեր-ինդուստրիալիստները») պա-
հանջում են, մեծ չափով բարձրացնել արդյուն-
աբերական ապրանքների գները, վորպեսզի
այդպիսով ավելանա արդյունաբերության շա-
հույթը և միջոցների այն քանակը, վոր հատ-
կացվում ե յերկրի ինդուստրիացման դործին:
Բայց մեր կուսակցությունն այդ ճանապարհով
գնալ չի կարող: Բարձր գների քաղաքականու-
թյունը միանգամայն սնընդունելի յե բանվոր
դասակարգի և և գյուղացիության դաշինքի ամ-
րացման տեսակետից, միանգամայն անընդու-
նելի յե արդյունաբերության զարգացման տե-
սակետից:

Կուսակցությունն ունի 1923 թվի փողձը, յերբ արդյունաբերական ապրանքների բարձր գների պատճառով գյուղացիությունը խիստ կրծատեց արդյունաբերական ապրանքների նկատմամբ ունեցած իր պահանջը, յերբ գյուղացին իրեն գնորդ «գործադուլ» արեց:

Այն ժամանակ, կուսակցության ուղղողիցան, ընկ. Տրոցկու գլխավորությամբ, իր ծրագրի կետերից մեկում առաջադրել եր արդյունաբերական ապրանքների բարձր գների պահպանման միջոցով մաքսիմալ շահույթ ստանալու պահանջը:

Կուսակցությունը վոչ միայն չգնաց այդ ճանապարհով, այլ և դիմեց զների իջեցման քաղաղաքականության միջոցով կուսակցությունն ապահովեց արդյունաբերության զարգացման ընթացքը: Գների իջեցման հետևանքով ընդարձակվեց գյուղացիության արդյունաբերական ապրանքների պահանջը: Մնած մասամբ դրանով իսկ պետք ե բացատրել արդյունաբերության այն բուռն աճումը, վոր տեղի ունեցավ 1924—25 թվերի ընթացքում:

Կուսակցությունն, իր գների քաղաքականությունն այսպես է կառուցում, վորպեսզի արդյունաբերության մեջ, նրա հետագա շինարարության համար վորոշ միջոցներ մնան: Բայց

միւնույն ժամանակ, գներն այնպիսի մակարդակի վրա պիտի լինեն, վորպեսզի գյուղացիությունն ավելի մեծ չափով արդյունաբերական ապրանքներ ձեռք բերելու և իր տնտեսությունը զարգացնելու հնարավորություն ունենա:

Գյուղացուն ձեռնտու յեն արդյունաբերական ապրանքների ցածր գները, քանի վոր նա հանդես է գալիս գնորդի դերում, իսկ գյուղացուն շահավետ են նաև գյուղատնտեսական ապրանքների բարձր գները, վորովհետև այստեղ արդեն, նա գյուղատնտեսական ապրանքներ վաճառող եւ:

Իշխող բանվոր դասակարգը միշտ պետք է վարի այնպիսի բաղաքականություն, վորը կապահովի թե գյուղատնտեսության և թե արդյունաբերության զարգացման շահերը։ Այդ նույն գիծը վարում է կուսակցությունը և հարկադին բաղաքականության ասպարիզում, վորը մասամբ կարող է ողտագործվել յերկրի ինդուստրիացման համար։ Հարկերի չափերը սահմանելիս, կուսակցությունը հաշվի յե առնում գյուղատնտեսության շահերը, նա հարկերի այնպիսի գումար է սահմանում, վորը ծանր չի անդրադառնա գյուղացիական տնտեսության վրա։

Գյուղացիական տնտեսության միջոցները յերկրի ինդուստրիացման մայք քաշելու ինդրում

ահագին նշանակություն ունեն և գյուղացիության խնայողությունները:

Իր խնայած գումարները, գյուղացին շահավետ կերպով չի ոգտագործում, այլ պահում են մոտ: Իսկ խնայողական դրամարկղները մուծած այդ գումարները գյուղացուն ահագին հասույթ կը տար, իսկ պետությանը՝ ըրջանառության միջոցներ:

Մենք սահմանեցինք գյուղացիական միջոցները ինդուստրիացման գործին մասնակից անելու լերեք խոշոր միջոց--գների քաղաքանությունը, հարկերը և վարկային քաղաքականությունը: Այդ բոլոր հնարավորությունները պետք են մեր կուսակցության կողմից ամեն կերպ ոգտագործվեն, և ոգտագործվեն այնպես, վորպեսզի գյուղացիությունը դեմ չգնա ինդուստրիացման, այլ ինդուստրիացման կիրարման գործում, գյուղացիության հանդեպ, մեր կուսակցությունն ու բանվոր դասակարգն ունենան իրենց մշտական և հաստատ դաշնակցին:

Մենք պետք են հաշվի առնենք միշտ այն սերտ կապը, վոր գոյություն ունի արդյունաբերության և գյուղատնտեսության միջև: Արդյունաբերության ծավաման համար պետք են ոգտագործել լերկրի բոլոր հնարավոր միջոցները: Բոյց միննույն ժա-

մանակ չպետք ե շատ տռաջազբել, չպետք ե գյուղատնտեսությունից կտրվել:

ՅՈՒՐԱԲԱՆՉՅՈՒԻՐ « Դրա մեջ և միայն դրա մեջ
ԿՈՊԵԿԸ պիտի լինի մեր հույսը », ա-
ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՄԱՆ սել ե Լենինը արդյունաբե-
ՀԱՄԱՐ

րության զարգացման մասին, ինգուստրիացման մասին: Խոշոր արդյունաբերության մեջ ե բանվոր դասակարգի ուժը:
Սոցիալիզմը պահանջում ե աշխատանքի բարձր արտադրողականություն: Սոցիալիզմ - նշանակում ե կատարելագործված խոշոր արդյունաբերություն, վոր պատկանում ե վոչ թե անհատ սեփականասիրոջ, այլ ամբողջ հասարակությանը:
Միայն խոշոր արդյունաբերության միջոցով մենք կարող կը լինենք վերականգնել մեր ամբողջ տընտեսությունը և բաժան-բաժան միլիոնավոր մանր տնտեսությունները վերելքի ուղին հանել:

Պետք ե կարողանալ խնայել յուրաքանչյուր ավելորդ կոպեկը արդյունաբերության կարիքների համար: Այդ նպատակով ել կուսակցությունը խնայողության ռեժիմ ե կիրառում: Կուսակցությունն անողոք պայքար ե հայտարարել անտեսավարության դեմ: Մեզնից յուրաքանչյուրն իր առօրյա աշխատանքների ընթացքում պետք ե կարողանա խնայել խորհրդային կոպեկը: Այդ անհրաժեշտ ե, քանի վոր առանձին կոպեկներից

Են կազմվուս այն միլիոնները, առանց վորի ան-
հարին ե առաջ տանել յերկրի ինդուստրալիզա-
ցիան:

ՀԱՐՑԵՐ

1. Արդյունաբերությունն ինչպես պիտի վե-
րակերտի գյուղացիական տնտեսությունը:

2. Ինչու ազատ առևտուրն ամրացրեց պե-
տական արդյունաբերության կապը գյուղատնտե-
սության հետ:

3. Ի՞նչ միջոցներով պետք ե պայքարենք
մասնավոր կապիտալի գեմ:

4. Ինչու Լենինը նեպը համարել ե պրոլե-
տարիատի միակ ճիշտ տնտեսական քաղաքակա-
նությունը:

5. Մենք ինչու տնտեսության վերականգ-
նումը սկսեցինք գյուղատնտեսությունից:

6. Կուսակցության 14-րդ համագումարն ին-
չու յե ասում, թե մենք հարձակման ենք դիմել
նոր տնտեսական քաղաքականության բազայի
վրա:

7. Կուսակցության 14-րդ համագումարն ին-
չու յե ասում, թե արդյունաբերությունն ավան-
գարդն ե, վորն իր մետեխնոլոգիան ե վողջ տըն-
տեսությունը,

8. Ինչու ինդուստրիացման զիխավոր խնդիրը ծանր արդյունաբերության զարգացումն ե:

9. Ներքին կուտակման ինչ հնարավորություններ կան մեղ մոտ:

10. Գների ինչ քաղաքականություն ե վարում մեր կուսակցությունը:

ԱՇԽԱՏԱՆՔ

1. Ուսումնասիրիք նեպի շրջանում ձեր գործարանի աճման տվյալները

ա) ինչ գումարի ապրանք ե արտադրվել 1922 և 1925 թվերին:

բ) ապրանքների ինքնարժեքը նույն տարիներին:

գ) ձեռքի աշխատանքը փոխարինվել ե մեքենայով, յեթե այս, վորոնք են արդյունքները:

2. Իմացեք, թե ձեր գործարանի մեքենաները վորտեղ են պատրաստվել:



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0045106

(154.)

ԳԻՆՆ Ե 15 ԿՈՂ.

A I
8584